

23219

Պ Ր Ո Ֆ Խ Ն Ե Դ Ի Ր Ն Ե Ր

ԿՈԼԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ՅԵՎ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԴԱԿՆՔԵԼ

331 · 11

Հ - 96

ԽՈՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀՐԱՄԱՆԱԿԶՈՒԹՅՈՒՆ. ՄՈՍԿՎԱ, 1929

L 2 FEB 2

331.11
6-96
4.

Ա. ՇՈՒԼՔԻՆԸ

END 15

ԿՈԼԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ՑԵՎ


ԻՆՉՊԵՍ ՊԵՏք Ե ԿՆՔԵԼ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՌՈՒԹՅՈՒՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, Ա

1929



5 .07. 2013



ԱԳՀՅՀ ՀԿՄ



6816-53

Главлит А 41097

Заказ № 1927

Тираж 4000 экз.

Кн. ф-ка Центриздана Народов СССР. Москва, Шлюзовый пр. 6.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ի՞նչ է ԿՈԼԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ՊՐՈՖԻՐԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԵՆԱԳԼԵԱՎՈՐ ՊՈՐՏԱԿԱ-
ՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՐՔ

ԽՍՀ Միության գրեթե ամբողջ բանվոր դա-
սակարգը միացնող մեր պրոֆեսիոնալ միություն-
ների կարևորագույն խնդիրն այդ դասակարգի
անտեսական և իրավական շահերի բազմակողմա-
նի և յեռանդուն պաշտպանությունն եւ հանդի-
սանում:

Պրոֆեսիոնալ միություններն ընդունում են
իրենց շարքերը միայն այն անձանց, վորոնք
վարձու աշխատանքով են զբաղվում: Սա միու-
թյան անդամության անհրաժեշտ պայմանն եւ:
Վարձու աշխատանքով զբաղվող անձինք վարձով
չաշխատվածներից տարբերվում են նրանով, վոր
առաջինների գոյության միակ աղբյուրն աշխա-
տավարձն եւ հանդիսանում: Ընտանիքը պահելու
բոլոր կարիքները (սննդի, հագուստի, կոշիկի,

բնակարանի ծախքերը) բանվորը կարող ե բավարարել միայն այդ աղբյուրից: Բանվորը՝ բնականաբար՝ ձգտում ե ավելի լիովին բավարարել իր կարիքները: Այդ հանգամանքը նրա համար անհրաժեշտ ե դարձնում իր գոյության աղբյուրի՝ աշխատավարձի՝ ավելացմանն ու աշխատանքի պայմանների բարելավմանը ձգտելը: Այսպիսով բանվորական մասսաների իրենց տնտեսական վիճակը բարելավելու մշտական ձգտումը պրոֆեսիոնալ միությունների գոյության հիմնական դրդիչն ու տնտեսական պատճառն ե հանգիսանում: Այս հիման վրա կազմակերպում և ամրապնդվում են պրոֆեսիոնալ միություններն իրեկ լայն անկուսակցական բանվորական կազմակերպություններ:

Վ.Ռ ԱՇԽԱՏԱՆՔՆ Ե ԿԵԶՎՈՒՄ ՄԻԱԽԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԻՖՆԵՐՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Պրոֆեսիոնալ միությունների առողյա աշխատանքի այն մասը, վորն արտահայտվում է աշխատավարձի, բանվորների աշխատանքի պայմանների ու ժողովրդական տնտեսության կազմակերպության մեջ պրոֆեսիոնալ միությունների մասնակցության հարցերի քննությամբ, կոչվում է տարիֆատնտեսական աշխատանք:

Խ.ՆՉ Ե ԿՈԼԵԽԱՑԻՎ, ՊԱՅՄԱՆԱԴԻԲԸ

Զեռնարկություններում և արդյունաբերության կամ տնտեսության մի ամբողջ ճյուղում զբաղված բանվորների աշխատանքի պայմանները և նրանց աշխատավարձի չափը վորոշվում են յերկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝
1) վարձողի, հանձին ձեռնարկության տնտեսավար որգանի կամ վարչության (իսկ մասնավոր կապիտալիստական տնտեսություններում-տնտեսության տիրոջ), վոր անաեսության շահերն եներկայացնում, և 2) պրոֆեսիոնալ միության, վոր ներկայացնում ե իր շուրջը միացած անդամների մասսայի վարձու բանվորների շահերը:

Այսպիսով, վարձողի մոտ զբաղված բանվորների աշխատանքի պայմանները և աշխատավարձի չափը հաստատվում են պայմանապրական կողմով, այսինքն յերկու կողմերի համաձայնության հիման վրա: Շնորհիվ այն հանգամանքի, վոր բոլոր բանվորները միատեսակ շահագրգուված են աշխատավարձի չափը բարձրացնելու և աշխատանքի այլ առավել ձեռնառու պայմաններ սահմանելու մեջ, նրանք, հանձին իրենց պրոֆեսիոնալ միության, հանդես են գալիս ընդհանուր ուժերով, կոլեկտիվ կերպով, այսինքն՝ միահամուռ ուժերով ձգտում են բարելավել իրենց գոյությունը:

Այդ պատճառով վարձողի ու պրոֆեսիոնթյան միջև կնքված գրավոր համաձայնությունը, վոր վորոշում ե տվյալ վարձողի մոտ աշխատող բանավորների աշխատանքի պայմաններն ու աշխատավարձի չափը, կոչվում ե կոլեկտիվ պայմանագիր:

Մեր պրոֆեսիոնալ միությունների տարիքատնտեսական աշխատանքի պրակտիկայում կոլեկտիվ պայմանագրերն ամենուրեք ամենալայն տարածումն են ստացել և հանրային հեղինակություն են ձեռք բերել իբրև անդամների մասսաների իրավական և նյութական շահերի պաշտպանության առավել նպատակահարմար և ձկուն ձեւ, վորը հարմարված ե արդյունաբերության տարբեր ֆինանսական հնարավորություններ ունեցող զանազան ճյուղերի պայմաններին:

Կոլեկտիվ պայմանագիրը վարձողի և նրա մոտ աշխատող բանավորների բոլոր աշխատանքային հարաբերությունների գլխավորագույն հիմքն ե հանդիսանում: Վարձողը պարտավորվում է պայմանագրի գոյության ժամանակամիջոցի ընթացքում կատարել նրա մեջ հիշված պայմանները և իրավունք չունի այդ պայմանները վասթարացնել առանձին բանվորների և ծառայողների համար: Այսպիսով, կոլեկտիվ պայմանագիրը վորոշում ե անձնական ու առանձին աշխատապայ-

մանագրերի բովանդակությունը՝ նրանց իր պաշտպանության տակ առնելով:

ԿՈԼԵԿՏԻՎ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոլեկտիվ պայմանագիրը բովանդակում ե աշխատանքի այն պայմանները, վորոնք բանվորների համար առաջնակարգ նշանակություն ունեն:

Կոլեկտիվ պայմանագրում շարադրված պայմանները յերկու հիմնական խմբի կարելի յե բաժանել՝ 1) աշխատանքի նյութական պայմանները, վորոնք չեն կարող նորմավորվել որենսդրությամբ և անմիջական կախումն ունեն տվյալ ձեռնարկության կամ տնտեսության ֆինանսական գրությունից, որինակ՝ աշխատավարձի չափը, արտադրանքի նորմերը, ըստգործյա վարձաքանակը և այլն. 2) աշխատանքի իրավական պայմանները՝ վարձման և արձակման կարգը, վարձողի կողմից արձակուրդներ տալը և այլն, վորոնք աշխատանքի որենսդրությամբ վորոշված ու պաշտպանվում են, և վորոնք, սպակյան, աշխատանքի գործադրվող որենսդրության համեմատությամբ կոլեկտիվ պայմանագրերում կարող են ավելի բարելավվել: Հասկանալի յե, վոր կոլեկտիվ պայմանագրում պիտի մատնանշվեն աշխատանքի այն պայմանները, վորոնք կամ բոլորովին չեն նախատեսված որենսդրությամբ, կամ՝ աշխատանքի

որենսողության համեմատությամբ բանվորներին առավել բարելավ պայմաններ են տալիս: Միանգամայն անթուլատրելի յեւ աշխատանքի որենսողական նորմանների համեմատությամբ վասթարցնել աշխատանքի պայմանները, և յեւթե նման պայմաններ թյուրիմացությամբ պայմանագիր են մտցված, որենքը նրանց իրական չի հաշվում: Հարկ չկա նույնպես պայմանագրում կրկնելու աշխատանքի որենսողությամբ սահմանված պայմանները, վորովհետև յուրաքանչյուր մի վարձող պարտական և Խ.Ս.Հ. Միության որենքները կատարել, իսկ չկատարելու կամ խախտելու գեպքում դատական կարգով յենթակա յեքաղաքցիական և քրեական պատասխանատվության: Ուստի և աշխատանքի որենսողությամբ նախատեսված նորմերն ու կանոնները, վորոնք վարձողի համար միանգամայն պարտագիր են հանդիսանում, չեն կարող յերկու կողմերի պայմանագրի առարկա լինել:

Աշխատանքի Բնշ՝ պայմաններ պիտի նախատեսի կոլլեկտիվ պայմանագրերը: Վարձողի և վրոֆեսիոնալ միության միջև կնքող համաձայնության զվարար առարկան աշխատավարձի բանվորի գոյության միակ աղբյուրի՝ չափն ե, վոր պայմանագրովում և կոլլեկտիվ պայմանագրում ավյալ ձեռնարկության, հիմնարկության

կամ տնտեսության մեջ զբաղված բանվորների բոլոր հատվածների համար:

Աշխատանքի որենսողությունը սահմանում է աշխատավարձի միայն նվազագույն չափը (մինիմումը), վորից պակաս վոչ մի վարձող իրավունք չունի վճարելու չափահաս բանվորին նորմալ բանվորական ժամանակի համար: Բանվորական ուժի ազատ վարձման հանգամանքի շնորհիվ անհնար և որենսողական կարգով սահմանել աշխատավարձի չափն արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղի, յուրաքանչյուր պրոֆեսիայի կամ մասնագիտության նկատմամբ, վորովհետև ահազին տարբերություններ գոյություն ունին թե արդյունաբերության զանազան ճյուղերի և թե այդ ճյուղերում զբաղված բանվորների պրոֆեսիաների ու մասնագիտությունների միջև: Այդ տարբերությունները մշտապես փոփոխվում են և տվյալ ձեռնարկության կամ տնտեսության ճյուղի պայմանները կարող են քիչ թե շատ ստույգ հաշվի առնվել վարձողի և համապատասխան պրոֆեսիոնալ միջև կոլլեկտիվ պայմանագիր կնքելու ժամանակ միայն: Այդ պատճառով աշխատավարձը պայմանագրի առարկա յեւ հանդիսանում և ներկայումս չի կարող պետության կողմից որենսողական կարգով նոր մագիստրով կամ պատճառության մեջ գոյության միակ աղբյուրի՝ չափն ե, վոր պայմանագրովում և կոլլեկտիվ պայմանագրում ավյալ ձեռնարկության, հիմնարկության

որենսդրության համեմատությամբ բանվորներին առավել բարելավ պայմաններ են տալիս: Միանգամայն անթույլատրելի յեւ աշխատանքի որենսդրական նորմաների համեմատությամբ վատթարացնել աշխատանքի պայմանները, և յեթե նման պայմաններ թյուրիմացությամբ պայմանագիր են մտցված, որենքը նրանց իրական չի հաշվում: Հարկ չկա նույնպես պայմանագրում կրկնելու աշխատանքի որենսդրությամբ սահմանված պայմանները, վորովհետև յուրաքանչյուր մի վարձող պարտական ե Խ.Ս.Հ. Միության որենքները կատարել, իսկ չկատարելու կամ խախտելու դեպքում զատական կարգով յենթակա յեքաղաքացիական և քրեական պատասխանատվության: Ուստի և աշխատանքի որենսդրությամբ նախատեսված նորմերն ու կանոնները, վորոնք վարձողի համար միանգամայն պարտագիր են հանդիսանում, չեն կարող յերկու կողմերի պայմանագրի առարկա լինել:

Աշխատանքի բնոչ պայմաններ պիտի նախատեսի կոլլեկտիվ պայմանագիրը: Վարձողի և պրոֆեսիոնալ միության միջև կնքվող համաձայնության գլխավոր առարկան աշխատավարձի բանվորի գոյության միակ աղբյուրի՝ չափն ե, վոր պայմանագրովում ե կոլլեկտիվ պայմանագրում ավյալ ձեռնարկության, հիմնարկության

կամ տնտեսության մեջ զբաղված բանվորների բոլոր հատվածների համար:

Աշխատանքի որենսդրությունը սահմանում ե աշխատավարձի միայն նվազագույն չափը (մինիմումը), վորից պակաս վոչ մի վարձող իրավունք չունի վճարելու չափահաս բանվորին նորմալ բանվորական ժամանակի համար: Բանվորական ուժի ազատ վարձման հանգամանքի շնորհիվ անհնար ե որենսդրական կարգով սահմանել աշխատավարձի չափն արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղի, յուրաքանչյուր պրոֆեսիալի կամ մասնագիտության նկատմամբ, վորովհետև ահազին տարբերություններ գոյություն ունին թե արդյունաբերության զանազան ճյուղերի և թե այդ ճյուղերում զբաղված բանվորների պրոֆեսիաների ու մասնագիտությունների միջև: Այդ տարբերությունները մշտապես փոփոխվում են և տվյալ ձեռնարկության կամ տնտեսության ճյուղի պայմանները կարող են քիչ թե շատ տառյգ հաշվի առնվել վարձողի և համապատասխան պրոֆեսիոնալ միջև կոլլեկտիվ պայմանագիրը կնքելու ժամանակ միայն: Այդ պատճառով աշխատավարձը պայմանագրի առարկա յեւ հանդիսանում ե ներկայումս չի կարող պետության կողմից որենսդրական կարգով նորմագրությունը բանվորին:

յերաշխավորում եւ աշխատավարձի միայն մինի-
մումը, վորը համտապատասխանում եւ հասարակ
աշխատանք կատարող ու անվարժ բանվորին և
առավել հետամնաց ու բոլորից նվազ ապահով-
ված տնտեսության հնարավորություններին:

Աշխատավարձը բանվորի վոչ միայն գոյու-
թյան աղբյուր եւ հանդիսանում: Նրա չափը, սիս-
տեման (ըստ ժամանակի, ըստգործյա, պրե-
միալ՝ և այլն) աճապին նշանակություն ունեն
ձեռնարկության աշխատանքը կազմակերպող վար-
ձողի համար: Աշխատավարձի ոգնությամբ վար-
ձողը ձեռնարկության մեջ կազմակերպում եւ
կենդանի բանվորական ուժը:

Բացի դրանից, արտադրության հետամնաց
տեխնիկայի հանդամանքում աշխատավարձը բա-
վական խոշոր ծախք եւ հանդիսանում, վոր հա-
ճախ գերակշռում եւ ձեռնարկության բոլոր այլ
ծախքերը: Աշխատավարձն ազդում եւ արտադր-
ված առարկաների գնի և հետևապես՝ նրանց
վաճառքի վրա: Այդ պատճառով վարձողը նույն-
պես որդանապես շահագրգուված եւ աշխատավար-
ձի չափի, նրա սիստեմի, ձևերի և վճարման ժամ-
կետների և այլ հարցերի վորոշման մեջ:

Այսպիսով, վասահորեն կարելի յեւ ասել, վոր
աշխատավարձը (նրա չափը, սիստեման, ձևերն
ու վճարման ժամակետները) կոլեկտիվ պայմա-

նագրի և միությունների պայմանագրական աշ-
խատանքի հիմնական բովանդակությունն եւ:

Վոչ պակաս կարեոր, քան աշխատավարձը,
հանդիսանում եւ կերտվածքների արտադրության
նորմերի հարցը: Թերեւս միակ և գլխավոր պար-
տականությունը, վոր ըստ կոլեկտիվ պայմանագրի
դրվում եւ բանվորի վրա՝ դա կերտվածքների
պայմանավորված արտադրության նորմերի կա-
տարումն եւ: Վարձողը իր վրա ընդունելով այս-
ինչ քանակով աշխատավարձ վճարելու պարտա-
կանությունը, բնականաբար, բանվորից պա-
հանջում եւ վորոշ ժամանակում վորոշ աշխա-
տանք կատարելու վորոշ յերաշխատավորություն
և պարտավորություն: Արտադրության այս կամ
այն նորմերի սահմանումը պայմանավորում է աշ-
խատանքի վորոշ լարում, բանվորի եներգիայի վո-
րոշ սպառումն: Բացի այդ արտադրության նոր-
մերից են կախված ըստգործյա վարձագները,
վորոնք աշխատավարձի փաստական չափն են վո-
րոշում: Այդ պատճառով արտադրության նոր-
մերը և ըստգործյա վարձագնահատության չափը
ձեռնարկությունների վարձագնահատիչ կոնֆլիկ-
տային հանձնաժողովներում սահմանվում են վոչ
այլ կերպ, քան կողմերի փոխադարձ համաձայ-
նությամբ: Այդ հանձնաժողովներում, վորոնք
բաղկացած են կողմերի հավասարաթիվ ներկա-

յացուցիչներից, հարցերը վճռվում են միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Բանվորների նյութական շահերին վերաբերող հարցերը՝ աշխատավարձի չափը, սիստեմը, նրա վճարման ձևերն ու ժամկետները, խոտանի (բրակի) ու ըստգործյա անավարտ աշխատանքների վարձահատուցման և արտադրության նորմերի ու ըստգործյա վարձագների սահմանման կարգը և այլն՝ կոլեկտիվ պայմանագրերում ամենախոշոր տեղն են գրավում, վորովինետե, ինչպես վերը հիշվեց, այդ հարցերն որենսդրական ստույգ նորմավորման յենթարկել անհնարին եւ իսկ աշխատանքի իրավական պայմաններին վել արերող հարցերն՝ ընդունում ու արձակում, արձակուրդ և այլն՝ կոլեկտիվ պայմանագրի համեմատաբար փոքր մասն են կազմում, վորովինետե աշխատանքի բավականաչափ ընդարձակ մեր որենսդրությունը հարկավոր չափով պաշտպանում ե աշխատողների շահերը: Բայց և այնպես, կոլեկտիվ պայմանագրերը պարունակում են նաև աշխատանքի որենսդրության իրեն լրացում՝ բանվորների վարձման և արձակման կարգի, արձակման նպաստի, բանվորական որի և հանգստի, աշխատանքի պաշտպանության, աշակերտության, ակումբների ու ֆաբրիկ-գործարանային կոմիտեների համար միջոցներ ներկայացնելու և այլն հարցերին վերաբերող պայմաններ.

ԿՈՂԵԿԱՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՐԸ ՅԵՎ ՏԱՐԻՑԱՅԻՆ
ՀԱՐՑԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարձողի և միության միջև կնքվում են և այնպիսի գլավոր համաձայնություններ, վորոնք պարունակում են աշխատանքի պայմանների մի սահմանափակ շրջան, վոր զիստավոր առմամբ ընդգրկում ե աշխատավարձի չափի, սիստեմի, նրա ձևերի և վճարման ժամկետների՝ այսինքն բանվորների նյութական շահերի հարցերը: Այդպիսի համաձայնությունները սովորաբար տարեթյան համաձայնությունների միջև վոչ մի սկզբունքային տարբերություն չկա: Տարիփային համաձայնությունները սովորաբար կնքվում են ավելի կարճ ժամանակամիջոցով, քան կոլեկտիվ պայմանագրերը. վերջինս ավելի լրիվ ե, քան տարիփային համաձայնությունները և ընդգրկում ե բանվորների և վարձողի աշխատանքային հարաբերությունների բոլոր կողմերը: Պարզ ե, վոր այն բոլորն, ինչ մատնանշում ենք մենք կոլեկտիվ պայմանագրի նկատմամբ, հավասարապես վերաբերում ե և տարիփային համաձայնություններին, վորոնք ըստ եյության կոլեկտիվ պայմանագրի մի մասը, կամ նրա մի այլ ձևն են հանգիստանում:

ԿՈԼԵԿՑԻՎ ՅԵՎ ԱՇԽԱՌԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր բանվորի և ծառայողի աշխատանքի և աշխատավարձի պայմանները վորոշվում են վոչ միայն կոլեկտիվ պայմանագրով. Աշխատանքի որենքների ժողովածուն (հոդված 15) սահմանում ե, վոր կոլեկտիվ պայմանագրիրը վորոշում ե «վարձման անձնական» (աշխատանքային) ապագա պայմանագրերի ըստվանդակությունը»: Մրանից յերեսում ե, կնքված է ոլեկտիվ պայմանագրից բացի, կամ նրա հետ միաժամանակ, կան նուև աշխատանքային պայմանագրեր, վորոնք վարձողը կնքում է անմիջապես յուրաքանչյուր բանվորի և ծառայողի հետ առանձին: Աշխատանքի որենքների ժողովածուն (հոդ. հոդ. 27 և 29) վարձողի համար պարտավորություն ե սահմանում վարձվողի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու՝ «աշխատանքային պայմանները մի համաձայնություն ե..., ըստ վորի մի կողմը (վարձվողը) վարձով տրամադրում ե մյուս կողմին (վարձողին) իր բանվորական ուժը: Աշխատավորական պայմանագիրը կնքվում է կոլեկտիվ պայմանագրի թե՛ բացակայության և թե՛ նրա առկայության դեպում»:

Ինչումն ե կայանում կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի տարբերությունը, և նրանք իրար չեն բացատում արդյոք:

Կոլեկտիվ պայմանագրիրը վորոշում ե աշխատանքի պայմանները վոչ թե առանձին ամեն մի բանվորի՝ Պետրոսյանի, Կիրակոսյանի կամ Մարկոսյանի համար: Նա սահմանում է միայն այն պայմանները, վորոնք պետք ե պարունակեն վարձողի և բանվոր Պետրոսյանի, Կիրակոսյանի և Մարկոսյանի մեջն կնքված աշխատանքային պայմանագրերը: Կոլեկտիվ պայմանագրերի պայմանները վորոշում են թե գործող աշխատանքային պայմանագրերի (կնքած այն բանվորների հետ, վորոնք արդեն աշխատում են) և թե ապագայում կնքվելիք աշխատանքային պայմանագրերի (այն բանվորների հետ, վորոնք կարող են վարձվել հետագայում) պայմանները: Կոլեկտիվ պայմանագրի պայմանները պարտավորեցուցիչ են աշխատանքային պայմանագրերի համար թե գործող և թե ապագայում բացվելիք ձեռնարկություններում: Աշխատանքի և վարձման պայմանները վորոշելով, կոլեկտիվ պայմանագրիրը դրանով չի հաստատում վարձման փաստը և անվանագես կանգ չի առնում առանձին անձանց վրա: Վարձվողի ու վարձողի միջև կնքված աշխատանքային պայմանագրիրը վորոշում ե աշխատանքային պայմանագրիրը վորոշում ե աշխատան-

Քային հարաբերությունը անհատապես յուրաքանչյուրի նկատմամբ: Աշխատանքային պայմանագիրը վորոշում է, թե ինչ աշխատանք, վորտեղ և ինչ վարձով պիտի կատարի Պետրոսյանն, իսկ կողեկտիվ պայմանագիրը նախորոք սահմանել է, վոր այդ աշխատանքի համար վարձվողը՝ միենույն է, Պետրոսյանը, թե կիրակոյանը՝ պետք ե ստանա այսքան վարձ, վորը և մեքենայաբար աշխատանքային պայմանագրի մեջ և մտցվում: Ահա սրանում է կայանում կողեկտիվ և աշխատանքային պայմանագրի հիմնական տարբերությունը:

Աշխատանքային և կողեկտիվ պայմանագրերի միջև կա մի այլ տարբերություն ևս: Կողեկտիվ պայմանագիրը ստորագրելիս բանվորական մասսան հանդես է գալիս միասին, հանձին իր միության, վոր բոլոր բանվորների շահերի ներկայացուցիչն և հանդիսանում, մինչեռ աշխատանքային պայմանագրի կնքելիս իրեր կողմ հանդիսանում է ինքը վարձվողը: Ըստ վորում պիտի նկատել, վոր կողեկտիվ պայմանագրով սահմանված պայմանների համեմատությամբ աշխատանքային պայմանագրում վորոշվող պայմանները չեն կարող վատթարացվել: Այսպիսով, բանվորի շահերը նախապես պաշտպանված են (կողեկտիվ պայմանագրի առկայության դեպքում) այն դեպքում,

յերբ նա մենակ է պայմանագրվում: Բացի այդ, աշխատանքային պայմանագիրը կարելի յեն կնքել թե գրավոր և թե բանավոր կերպով: արդեն այն հանգամանքը, վոր բանվորը գործի յեն անցել, իսկ վարձողը թույլ է տվել այդ և աշխատավարձ և վճարում նրան, ապացույց է հանդիսանում վոր նրանք յերկումն ել վարձման մասին համաձայնության են յեկել, այսինքն՝ բանավոր աշխատանքային պայման են կնքել: Իսկ կողեկտիվ պայմանագիրը կնքվում է միայն գրավոր կերպով: Աշխատանքային պայմանագիրը վոչ մի ցուցակագրման յենթակա չե, մինչդեռ կողեկտիվ պայմանագիրը պարտազրապես պիտի ցուցակագրվի Սփողովը գողովական կոմիսարիատի որպաններում: Յեթե կողեկտիվ պայմանագիրը չի ցուցակագրված, ապա միության և վարձողի միջև յեղած վեճերն ու տարածայնությունները դատի ժամանակ վճռվում են վոչ թե կողեկտիվ պայմանագրի, այլ աշխատանքի որենսդրության սահմանած ընդհանուր նորմերի և կանոնների հիմնած վրա:

Այս բոլորից պարզ է, վոր կողեկտիվ և աշխատանքային պայմանագրերն իրար վոչ մի կերպ չեն բացասում և չեն փոխարինում: Կողեկտիվ պայմանագիրը միայն լրացնում է աշխատանքային պայմանագրի և՝ մինույն ժամանակ՝ պրո-



Քեսիոնալ միությունների համար բանվորական մասսաների տնտեսական շահերի պաշտպանության մի միջոց ե հանդիսանում, վոր հնարավորություն ե տալիս աշխատողների ընդհանուր, միացյալ ու կոլեկտիվ ջանքերով հասնել աշխատանքի ավելի բարելավ պայմանների:

Խօնջութիւն ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՊԻՏԻ ԿԵՐՎԻ
Կոլեկտիվ պայմանագիրը մատչելի պիտի լինի լայն բանվորական մասսաների հասկացողությանը, նրա պայմանները պետք ե ստույգ ձեռվակերպված լինեն: Գործնականում մենք հաճախ այլ բան ենք տեսնում: Հաղվազյուտ չեն դեպքերը, յերբ պայմանագիրը ստորագրելուց հետո միության և վարձողի միջև վեճ ե ծագում պայմանագրի այս կամ այն կետի (պայմանի, պարտավորության) տարբեր մեկնաբանության շնորհիվ: Դա առաջանում ե այն հանգանակի հետեւանքով, վոր պայմանները գրի յեն առնվել վոչ պարզ (անհասկանալի) լեզվով: Ուստի և ամենից առաջ անհրաժեշտ ե վերացնել անփույթ վերաբերմունքը պայմանագրի պայմանների շարադրման ու հրապարակման նկատմամբ: Միությունը պիտի ամեն ջանք թափի պայմանագրի այս կամ այն կետը հարկավոր չափով ավելի պարզ, դյուրին և ստույգ ձեռվակերպելու համար, վորպեսզի վարձողը,

միությունը և՝ գլխավորապես այդ պայմանների հիման վրա աշխատող անդամների մասսան միատեսակ հասկանան և մեկնաբանեն այդ պայմաններն ու պարտավորությունները: Պրոֆեսիոնալ միությունները պետք ե անհրաժեշտորեն ձգտեն նաև պայմանագրի կետերի հնարավոր կրծտմանը: Կոլեկտիվ պայմանագիրը հարկ չկա ծանրաբեռնել մանր պարտավորություններով կամ կրկնել նրանց մեջ աշխատանքի այն պայմանները, վորոնք բավականաչափ պաշտպանվում են զործող որենազրության կողմից: Վորքան ավելի համառոտ ե պայմանագիրը և վորքան ավելի պարզ են ձեռակերպված նրա պայմանները, այնքան ավելի նաև մատչելի յեն բանվորների հասկացողությանը: Միության պարտականությունն ու յերաշխիքը անդամների մասսայի վերաբերմամբ պայմանագրի պայմանների պարզ և հասկանալի ձեռակերպման մեջ ե կայանում:

ՈՒՄ Ե ՊԱՅՄԱՆՈՒՄ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Այն հարցին, թե ում ե ԽՍՀ Միության մեջ պաշտպանում կոլեկտիվ պայմանագիրը, այսինքն՝ անձանց բնիչ շրջան ե ընդգրկում նրա ուժը, պարզ պատասխան ե տալիս մեր պլոֆեսիոնալ միությունների կազմակերպչական սիստեմը:

հնչպես հայտնի յեւ, Արևմտյան Յեվրոպայի
գրեթե բոլոր յերկրներում պրոֆեսիոնալ միու-
թյունները կազմակերպված են ըստ նեղ պրո-
ֆեսիոնալ «համբարական» (ՊԵԽՕԲՎԱՌ) հատկանիշի: Այստեղ կարելի յեւ ականատես լինել այնպիսի
դեպքերի, յերբ մինույն ձեռնարկության բան-
վորները միացված են 12-15 (և ավել) պրոֆե-
սիոնալ միություններում: Զվորակավորված (ան-
վարժ) բանվորներն իրենց պրոֆեսիոնալ միու-
թյունն ունեն, մեքենավարներն՝ իրենց, հնոցա-
վառներն՝ իրենց և այլն: Յուրաքանչյուր միու-
թյուն կոլեկտիվ պայմանագիր եւ կնքում միայն
իր անդամների համար: Դրա պատճառով ել հա-
ճախ պատահում եւ, վոր մի ձեռնարկության սահ-
մաններում գործում են 10-15 և ավելի կոլեկ-
տիվ պայմանագրեր, վորոնք սահմանում են աշ-
խատանքի վոշմիատեսակ պայմաններ և պաշտ-
պանում են միայն տվյալ պրոֆեսիայի բանվոր-
ների շահերը: Իսկ այն բանվորները, վորոնք
վորեե միության անդամ չեն հանդիսանում, վոչ
մի պայմանագրով չեն պաշտպանվում: Կարիք
չկա ասելու, վոր պրոֆեսիոնալ միությունների նման կառուցումը և կուլեկտիվ պայմանա-
գրերի կնքման նման կարգը ջլատում են բան-
վորական մասսաների ուժերը և ծայր աստիճա-
նի թուլացնում են նրանց պրոֆեսիոնալ միու-

թյունների ռազմական ուժը կապիտալի դեմ
պայքարելու գործում: Յեթե, որինակ, միու-
թյուններից մեկը գործադուլ եւ հայտարարում
կոլեկտիվ պայմանագիրը կնքելիս վարձողի հետ
ծագած տարածայնությունների շնորհիվ, այլ միու-
թյունները, վորոնց այդ վարձողի հետ կնքած
պայմանագրերը զեռ չեն կորցրել իրենց ուժը,
իրենց պարտավոր չեն համարում գործադուլ
հայտարարողների հետ համերաշխ լինել և ակտիվ
կերպով նրանց չեն աջակցում: Այսպիսով, դուրս
ե գալիս, վոր մի վորեե ձեռնարկության մեջ մի-
յերկու պրոֆեսիայի բանվորները գործադուլ են
հայտարարում, իսկ մնացյալներն աշխատում
են: Սրա հետեանքով գործադուլը վիճում եւ և
դրանով դժվարանում ե պրոցմիությունների պայ-
քարը վարձողների դեմ, աշխատանքի բարելավ
պայմաններ ձեռք բերելու համար:

Մեր պրոֆեսիոնալ շարժումը բոլորովին այլ
կազմակերպչական կառուցվածք ունի: «Մի ձեռ-
նարկություն — մի միություն» սկզբունքը գըր-
ված ե մեր պրոֆմիությունների կազմակերպ-
ման հիմքում: ԽՍՀ Միության պրոֆեսիոնալ մի-
ությունները կազմակերպված են ըստ արտա-
դրական սկզբունքի: Սա նշանակում ե, վոր մի
պրոֆեսիոնալ միություն ընդգրկում ե տվյալ
ձեռնարկության, արդյունաբերության կամ տրն-

տեսության տվյալ ճյուղի մեջ զբաղված բոլոր բանվորներին և ծառայողներին, առանց պրոֆեսիաների և մասնագիտությունների խարության։ Որինակ, յերկաթուղային տրանսպորտում զբաղված բոլոր պրոֆեսիաների բոլոր բանվորներն ու ծառայողները կազմում են պրոֆեսիոնալ միության՝ յերկաթուղային տրանսպորտի աշխատողների միություն, լեռնարդյունաբերության մեջ աշխատողները՝ լեռնարդյունաբերական բանվորների միություն, վորն ընդգրկում է լեռնարդյունաբերության մեջ զբաղված բոլոր բանվորներին և ծառայողներին։

Պարզ է, վոր կազմակերպչական նման սիստեմով միության միջոցների և ուժերի առավել տնտեսումն և ձեռք բերվում և ավելանում է միության ուժն ու ռազմունակությունը։

Բացի այդ, մեր միությունները վոչ միայն իրենց անդամների, այլ և պրոֆեսիոնալ միության մեջ չմտնող, բայց տվյալ ձեռնարկության մեջ աշխատող անձանց շահերի ներկայացուցիչն են հանդիսանում։ Այդ պատճառով բոլորովին բնական ե, վոր կողեկտիվ պայմանագրի պայմանները տարածվում են տվյալ ձեռնարկության մեջ աշխատող բոլոր բանվորների և ծառայողների վրա։ Կողեկտիվ պայմանագրի հավասարական կերպով պայմանագրի ուժը չի տարածվում։

Ված և թե անկազմակերպ բարնվորների ու ծառայողների շահերը։

Այդ պատճառով աշխատանքի որենքների ժողովածուի 16-րդ հոդվածը սահմանում է։

«Կողեկտիվ պայմանագրի պայմանները տարածվում են տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության մեջ աշխատող բոլոր անձանց վրա, անկախայն հանգամանքից՝ պայմանագրի վրա կնքող միության անդամ են նրանք թե՝ վոչ։

Ծանոթություն։ Կողեկտիվ պայմանագրի ուժը չի տարածվում վարչական պերսոնալին պատկանող այն անձանց վրա, վորոնք ոգտվում են վարձման և արձակման իրավունքով։

Այս կանոնից բացառություննեն կազմում միայն այն անձինք, վորոնք վարչական պաշտոններ են վարում և ոգտվում են բանվորների և ծառայողների վաճրման ու արձակման իրավունքով։ Մասնավոր և կոնցեսիոն (բայց վոչ պետական) ձեռնարկություններում զբաղված այդ կատեգորիայի անձանց վրա կողեկտիվ պայմանագրի ուժը չի տարածվում։

Պայմանագրական աշխատանքի գործնականում սովորություն է գարձել միության անդամների համար միայն մի առավելության սահմանումը։ Այդ առավելությունը կայանում է նրանում, վոր շատ միություններ պայմանագրի մեջ մտցնում

են մի կետ, ըստ վորի վարձողը պարտավորվում է առաջին հերթին՝ բոլոր այլ հավասար պայմաններում՝ աշխատանքի ընդունել միության անդամներին (յեթե միություններում կան ցուցակագրված գործազուրկներ), իսկ մասսայական արձակումների ժամանակ՝ առաջին հերթին արձակել նրանց, վորոնք միության անդամ չեն:

Այս բոլորովին հասկանալի կդառնա, յեթե հիշենք, վոր միությունները ձգտում են, վորպեսզի ձեռնարկություններում կազմակերպված աշխատանք գործադրվի:

Բացի այդ, միության անդամ բանվորը կամ ծառայողը մի շարք հասարակական պարտականություններ ունի՝ նա անդամավճար և տալիս, իր վաստակից մասն և հանում գործազուրկներին, պարտավոր և միութենական վորոշ անվարձ աշխատանք կատարել (անդամավճարների հավաքելը և այլն): Բնական է, վոր միությունն ել պետք և ամենից առաջ և առավելապես նոզա իր անդամների մասին ու աշխատի նրանց համար ըստ հնարավորին բարելավ վիճակ ստեղծել:

ԿՈՂԵԿՏԻՎ. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՏԵՍՍԿԻՆԵՐԸ

Պրոֆեսիոնալ միությունները գործադրում են կողեկտիվ պայմանագրերի գանգան տեսակներ:

Կողեկտիվ պայմանագրերն ըստ իրենց գործողության ծավալի բաժանվում են յերկու հիմնական տիպի՝ ա) զլիավոր կամ համապետական, և բ) լոկալ կամ աեզական: Բացի այդ, կան և այսպես կոչված խոշորացված կողեկտիվ պայմանագրեր:

Գլխավոր կամ համապետական սովորաբար կոչվում են այն կողեկտիվ պայմանագրերը, վորոնք իրենց ուժը (աշխատանքի և աշխատավարձի պայմանները) տարածում են արդյունաբերության կամ տնտեսության մի վորեւ ճյուղին պատկանող բոլոր գործարաններում և ֆաբրիկներում զբաղված բանվորների վրա, կամ մի խոշոր համապետական տնտեսական որգանի ձեռնարկություններում և հիմնարկություններում աշխատաղների վրա: Այդպիսի պայմանագրերի թվին են պատկանում՝ յերկաթուղային աշխատողների միության կենտրոնական կոմիտեյի և հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատի միջև կնքված կողեկտիվ պայմանագրերը, ժողովրդական կապի աշխատողների միության կենտրոնական կոմիտեյի և փինանսների ժողովրդական կոմիսարիատի միջև կնքված պայմանագրերը և այլն: Աշ-

խատանքի և աշխատավարձի պայմանները, վորոնք հաստափած են այս պայմանագրերով, առանց վոչ մի բացառության տարածվում են հիշյալ տընտեսական որդանների (ուր ել վոր լինեն նրանց հիմնարկություններն ու ձեռնարկությունները) ձեռնարկություններում ու հիմնարկություններում զբաղված բոլոր բանվորների ու ծառայողների վրա։ Գլխավոր պայմանագրերը կնքելիս իբրև պայմանագրվող կողմեր առհասարակ հանդիսանում են պրոֆեսիոնալ միությունների կենտրոնական մարմինները (կենտրոնական կոմիտեները) մի կողմից, և համապետական անտեսական կամ խորհրդային որդանները՝ մյուս կողմից։

Լոկալ՝ կամ տեղական համարվում են այն կոլեկտիվ պայմանագրերը, վորոնց ուժը (այսինքն՝ աշխատանքի և աշխատավարձի պայմանները) տարածվում է մի ձեռնարկության մեջ զբաղված բանվորների և ծառայողների վրա։ Տեղական պայմանագրը կնքելիս համաձայնվող կողմեր են հանդիսանում՝ համապատասխան պրոֆեսիոնալ միության նահանգական, ուայոնական կան գավառական որդանը և տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության վարչությունը։

Գլխավոր պայմանագրեր կնքելիս, հաճախ կողմերի համաձայնությամբ նախատեսվում են ի լրացումն գլխավոր պայմանագրի՝ տեղական պայմա-

նագրեր կնքելու հնարավորությունը, վոր նպատակ ունի տեղական մարմիններին՝ ըստ ձեռնարկության գինանսական վիճակի կայունության և այլ բարենպաստ հանգամանքների՝ հնարավորություն տալ տեղական պայմանագրում սահմանել գլխավոր համաձայնության համեմատությամբ աշխատանքի ավելի բարեկավ պայմաններ։ Գլխավոր պայմանագրի նկատմամբ տեղական լրացուցիչ պայմանագրի կնքող կողմեր են հանդիսանում միևնույն կազմակերպությունները, վորոնք տեղական պայմանագրի են կնքում գլխավոր պայմանագրի բացակայության դեպքում։

Համեմատած տեղական պայմանագրերի հետ, գլխավոր պայմանագրերը մեր պայմաններում ունեն թե առավելություններ և թե թերություններ։ Գլխավոր պայմանագրերի հիմնական առավելությունը նրանում է, վոր այս վերջինները կնքելիս պրոֆեսիոնալ միությունը լիակատար հնարավորություն ունի ավելի ստույգ վորոշելու վողջ արդյունաբերության ֆինանսական վիճակը, ձեռնարկությունների հում նյութով և պատվերներով ապահովված լինելու աստիճանը, զբաղված լինելու աստիճանը, թե ինչ չափով են ձեռնարկությունները լայնացվում, պահանջվում են արդյոք բանվորների թվի ավելացում և այլն։ Միության տեղական մարմնի համար մի

ձեռնարկության տնտեսության ավյալների հիման վրա այս բոլորը վորոշել շատ դժվար ե և յերբեմն՝ անհնարին, վորովինետև ձեռնարկության աշխատանքը սերտ կերպով կապված ե ու կախումն ունի նույնիսկ այլ շրջանում գտնվող մյուս համանշան արտադրությունների դորձնելությունից։ Իսկ արդյունաբերության ամբողջ ճյուղի մեջ ավյալ ձեռնարկության տնտեսական և ֆինանսական կացությանն առանց պարզելու իմաստ չունի կոլլետիվ պայմաններ կնքել, քանի վոր աշխատանքի պայմաններն ու աշխատավարձի չափը վորոշվում են ձեռնարկության և արդյունաբերության ավյալ ճյուղի տնտեսական դրության համեմատ։ Առանց ավյալ ձեռնարկության տնտեսավարական և ֆինանսական կացությունը հաշվի առնելու, կնքած կոլլետիվ պայմանագիրը կարող ե բովանդակել առկա հնարավորությունների համեմատությամբ աշխատանքի վատթարացրած պայմաններ, կամ թե այնքան ծանր պայմաններ, վոր արտադրության համար բացարձակագես անիբագործելի կհանդիսանան։ Իսկ վորձը ցույց ե տալիս, վոր ձեռնարկության համար անիբագործելի և նրա ուժից վեր կոլլետիվ պայմանագրից ավելի վատ բան չկա։ Այսպիսի պայմանագիրը հանգում ե կամ պարտքերի կուտակմանը (բանվորներին աշխատավարձ

չվճարելու հետևանքով) և աշխատանքի այլ պայմանների խախտմանը (ու այդ գեպքում պայմանագիրը կորցնում ե իր վորջ նշանակությունը), կամ ձեռնարկության միջոցների սպառմանն ու նրա փակմանը։

Բացի մատնանշված առավելություններից, գլխավոր պայմանագրի սիստեմը թերություններ ել ունի։

Գլխավոր պայմանագիրը սովորաբար կնքվում է կենարոնում, այս հանդամանքը հնարավորություն չի տալիս արդյունաբերության ավյալ ճյուղում զբաղված բանվորների և ծառայողների ամբողջ մասսան մասնակից անել պայմանագրի մշակման ու քննությանը և թուլացնում ե նրա կազմակերպիչ և գաստիարակչական նշանակությունը։ Սակայն, այս թերությունն զդալի չափով վերացվում ե այն գեպքերում, յերբ գլխավոր պայմանագրերը նախատեսում ե լրացուցիչ տեղական պայմանագրերի կնքելու հնարավորությունը։

Այսպես կոչված խոշորացված կոլլետիվ պայմանագրերը գլխավոր և տեղական պայմանագրերի միջին տիպն են հանդիսանում։

Խոշորացված պայմանագրերի ուժը տարածվում է միևնույն տնտեսական ռայոնում գտնվող միքանի համաշան ձեռնարկությունների վրա։

Այսպիսի պայմանագրերը կնքվում են առավելապես տեղական նշանակություն ունցող համա-

նշան ձեռնարկություններում աշխատանքի և
աշխատավարձի հնարավոր չափով միատեսակ պայ-
մաններ սահմանելու նպատակով:

Վերեռում արդեն մատնանշվեց, վոր կոլլեկ-
տիվ պայմանագրեր կնքելու բոլոր ղեպքերում
աշխատողների իրքի ներկայացուցիչ (կողմ) հան-
դես ե գալիս ավյալ պրոֆեսիոնալ միության
վորեկ մարմինը՝ նրա կենտրոնական կոմիտեն,
նահանգական բաժանմունքի վարչությունը և
այլն: Յերբեմն պատահում ե, վոր բանվորների և
ծառայողների անունից իրքեւ կողմ հանդես են
գալիս յերկու և նույնիսկ յերեք միություն:

Այդ պատահում ե այն ժամանակ, յերբ մի
անտեսական որդանի տնօրինության ներքո գըտ-
նվում են տարբեր տիպի ձեռնարկություններ,
վորոնց բանվորներն ու ծառայողները մի քանի
միությունների յեն պատկանում, վորոնք ցան-
կանում են ավյալ անտեսական որդանում զբաղ-
ված բոլոր բանվորների և ծառայողների համար
աշխատանքի միանման պայմաններ և աշխատա-
վածի միանման չափ սահմանել:

Յերկու, յերեք (և ավելի) միությունների նման
հանդես գալը նրանց համար բոլորովին պար-
ատագիր չե և կատարվում ե այն ղեպքերում,
յերբ կոլլեկտիվ պայմանագիրը միասին կնքելը
հնարավորություն ե տալիս աշխատանքի ավելի
բարենպաստ պայմաններ սահմանել:

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ԿՈԼԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

ՄԻՈՒԹՅՈՒՆ ԿՈԼԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՂ
ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՈՐԳԱՆՆԵՐԸ

Աշխատանքի որենքների ժողովածուն (Հոդ.
15) մատնանշում ե, վոր «կոլլեկտիվ պայմանա-
գիրը մի համաձայնություն ե, վոր կնքում ե
մի կողմից՝ պրոֆեսիոնալ միության, իրքի բան-
վորների և ծառայողների ներկայացուցչի և
մյուս կողմից՝ վարձողի միջև...»: Սրանից յերե-
վում ե, վոր կոլլեկտիվ պայմանագիրը կնքում
ե վոչ թե բանվորների և ծառայողների մի վորեկ
հատվածը կամ ֆարբիկ-գործարանային կոմի-
տեն անմիջապես՝ այլ կնքում ե պրոֆեսիոնալ
միությունը (միության ռայոնական կամ նահան-
գական բաժանմունքը, կամ կենտրոնական կոմի-
տեն), վորը արդյունաբերության կամ տնտեսու-
թյան տվյալ ճյուղի բոլոր բանվորների և ծառա-
յողների շահերն ե ներկայացնում և պաշտպանում:

Վորպեսզի պայմանագրում ավելի ճիշտ սահ-
մանվեն ձեռնարկության ուժերին համապատաս-
խան և միևնույն ժամանակ բանվորների համար
աշխատանքի առավել նպաստավոր պայմաններ,
միությունը պետք ե պարզի ավյալ ձեռնարկու-

թյան տնտեսական դրության իսկական պատկերը՝ ինչպիսի աշխատունակություն ունի այդ ձեռնարկությունն այլ համանշան ձեռնարկությունների համեմատությամբ, ինչ չափով և ապահոված նրա արտադրած առարկաների վաճառումը, ինչ դրության մեջ և աշխատանքի շուկան (գործադրկությունը) և այն։ Աշխատանքի և աշխատավարձի պայմանները վորոշող այս հարցերի պարզումը, միության հիմնական աշխատանքն ե, վորը բոլորովին անկարող և ինքնուրույն կատարել բանվորների և ծառայողների առանձին մի հատվածը և վորը մի ֆարբիկ գործարանային կոմիտեյի ուժերից վեր ե։

Այս հարցերի կարգավորման անհրաժեշտությունը՝ վոչ թե մի գործարանի կամ ֆարբիկի՝ մասշտարով, այլ ամբողջ նահանգի և ապա նույնիսկ համամիութենական մասշտաբով՝ պահանջում ե պրոլետարիատի միացյալ տնտեսական կազմակերպությունների՝ պրոֆեսիոնալ միությունների՝ միջամտությունը։ Կոլեկտիվ պայմանագիր կնքելիս սրովիելունակ միությունը յելնում ե բանվորների և ծառայողների թե առանձին խմբակցությունների և թե միության շուրջը կազմակերպված բոլոր մասսաների շահերից ու հաշվի յե առնում թե առանձին ձեռնարկության և թե տնտեսություն ամբողջ ճյուղի հնարավո-

րությունները, վորով նա յերաշխավորում ե աշխատանքի պայմանագրի և աշխատավարձի չափի առավել ստույգ վորոշումը։

ԿՈԼԵԿՑԻՎ, ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ԻԲՐԵՎ ՄԱՍԱՆԿԵՐԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒ ՅԵՎ ՊՐՈՖԻՐԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՉԸ ՆՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԻՋՈՅ

Կոլեկտիվ պայմանագիրը հանդիսանալով վարձողի և պրոֆմիության գործնական մի համաձայնություն, վորը կանոնավորում է աշխատանքի և աշխատավարձի պայմանները, միևնույն ժամանակ ահազին նշանակություն ունի, իբրև անդամների մասսաների գաստիարակման և նրանց իրենց պրոֆեսիոնալ միության շուրջը կազմակեղելու միջոց։ Յերբ կոլեկտիվ պայմանագիրը կնքող միության որգանը տվյալ ձեռնարկության ընդհանուր ժողովին նախապես այդ պայմանագիրը բանվորների քննության ե դնում, բոլորովին բնական ե, վորնա պետք ե բացատրի, թե ինչո՞ւ աշխատավարձի հենց այս, և վոչ այլ չափ ե յենթագրում միությունը պահանջել վարձողից, ինչո՞ւ ներկառումս անհնար ե աշխատանքի ավելի բարենպաստ պայմաններ պահանջնել ու կոլեկտիվ պայմանագրերով այդ հասասատել և այն։ Միության ներկայացուցիչը պետք ե բանվորների առաջ հիմնավորի իր պահանջներն, այսինքն հաղորդի

նրանց այն տեղեկությունները, վորոնք նա ունի
ձեռնարկության ֆինանսական վիճակի, նրա տըն-
տեսական դրության մասին և այլն:

Այսպիսով, կոլեկտիվ պայմանագրերի սիս-
տեմը ընդլայնում է այն հարցերի շրջանը,
վորոնց վորոշման մեջ մասնակցում են բանվո-
րական մասսաները, նրանց մասնակից են անում
արտադրության հարցերի քննությանը, նրանք
ծանոթանում են իրենց ձեռնարկության և ար-
դյունաբերության մի ամբողջ ճյուղի տնտեսու-
թյանն ու ֆինանսական վիճակին, ժողովրդական
տնտեսության կացությանը և զարգացմանը: Սրա-
նումն է կայանում կոլեկտիվ պայմանագրի՝
իրեն բանվորական մասսաների արտադրական
դաստիարակման միջոցի՝ կարեռ նշանակու-
թյունը: Բացի այդ, կոլեկտիվ պայմանագրիը
շոշափելով բանվորն ը առորյա եյական շահերը,
ակտիվություն և ինքնագործնեյություն ե արթ-
նացնում լայն բանվորական մասսաների և նրանց
պրոֆեսիոնալ միությունների մեջ: Իր շուրջը
համախմբված անդամների շահերի հմուտ պաշտ-
պանության ու այդ ակտիվության ու ինքնա-
գործնեյության հողի վրա կատարվում ե ան-
դամների մասսաների կազմակերպումն իւենց
պրոֆեսիոնալ միության շուրջը:

ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՅԵՎ
ՄԱՍՆԱՎՈՐ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կոլեկտիվ պայմանագրերի դերը պետական
և մասնավոր ձեռնարկության վերաբերմամբ
տարրեր ե այնպես, ինչպես տարրեր են պետա-
կան և մասնավոր ձեռնարկությունների բնույթն
ու եյությունը:

Մեր յերկրում, պրոլետարիատի դիկտատու-
րայի յերկրում, ամբողջ խոշոր արդյունաբերու-
թյունն ու տնտեսության զիսավորագույն ճյու-
ղերը պետականացված են, այսինքն գտնվում են
պետական իշխանության՝ վոր բանվոր դասակարգի
դիկտատուրան և իրազործում՝ տնող ինության
ներքո: Հասկանալի յե, վոր պետական տնտեսու-
թյունից և արդյունաբերությունից ստացվող բո-
լոր յեկամուտներն ու շահը պետության կարգա-
դրությանն են հանձնվում: Այսպիսով գումարված
ամբողջ շահի բաշխումը գտնվում է բանվոր
դասակարգի ձեռքում և կախված է նրա կամքից:
Բանվորների և ծառայողների աշխատավարձի
չափն անմիջական կախումն ունի պետական
արդյունաբերության և տնտեսության յեկամու-
տների գումարած արժեքների քանակից:

Շահերի աճումն իր հերթին կախումն ունի
մեր տնտեսության և արդյունաբերության ընդ-

լայնութից և բարելավութից։ Այդ պատճառով պրոֆեսիոնալ միությունները հոգում են պետական արդյունաբերության աճման և բարգավաճման մասին ու բանվոր դասակարգի ստեղծած արժեքների ավելացման մասին։ Կոլեկտիվ պայմանագրեր կնքելիս պրոֆմիությունների աշխատավարձի այս կամ այն չափի պահանջը բղխում է դասակարգակին տյա կարեռագույն խնդիր։ Այսպիսով, պրոֆեսիոնալ միության հիմնական խնդիրը՝ բանվորների տնտեսական շահերի պաշտպանությունը՝ զուգորդվում է բանվոր դասակարգի ընդհանուր խնդիրների հետ և համապատասխանում է ժողովրդակ ն տնտեսության վհճակին։

Այլ պատկեր է ներկայացնում մասնավոր ձեռնարկությունը։ Յուրաքանչյուր մասնավոր կամ կոնցեսիոն ձեռնարկության մեջ բանվորների շահագործության միջոցով ստացված շահը բացառապես մտնում է գործատիրոջ գրավանն ու նրա անհատական տնօրինությանն և անցնում։

Պետական սոցիալիստական ձեռնարկություններում բանվորների աշխատանքի միջոցով ստեղծվող հավելյալ արժեքը սոցիալիստական կուտակումն է հանդիսանում և գործադրվում է սոցիալիզմի ամրացման և կապիտալիզմի քայլացման համար։ Մասնավոր ձեռնարկության մեջ շահագործությունների համապատասխան համակարգը կապիտալիզմի առաջնայությունը, (Պրոֆեսիոնալ միությունների Վ-րդ համառուսական համագումարի վրոշումներից)։

բանվորների շահագործման միջոցով առաջացող հավելյալ արժեքը կապիտալիստի անձնական կուտակումն է հանդիսանում և գործադրվում ե բանվոր դասակարգաման համար։

Պրոֆեսիոնալ միություններն աջակցելով պետական ձեռնարկությունների ամրացմանն ու զարգացմանը, մասնավոր տերերի ձեռնարկությունների վերաբերմամբ գործադրվում են դասակարգային պայքարի սովորական յեղանակները։ Այդ պատճառով՝

«Պրոլետարիատի գլխատառության պայմաններում կոլեկտիվ պայմանագիրը յերկիմաստ նշանակություն ունի մասնավոր և պետական ձեռնարկության նկատմամբ»

Սուածին դեպքում (այսինքն՝ մասնավոր ձեռնարկության նկատմամբ։ Մ.Շ.) կոլեկտիվ պայմանագիրը աշխատանքի և կապիտալի տնտեսական պայքարում ուժերի հարաբերության արտահայտությունն և հանդիսանում, իսկ յերկրորդ դեպքում պետական արդյունաբերության՝ ամբողջապես և պրոլետարական պետության ընդհանուր տնտեսական սիստեմի մեջ տվյալ ձեռնարկության տնտեսական վիճակի արտահայտությունը, (Պրոֆեսիոնալ միությունների Վ-րդ համառուսական համագումարի վրոշումներից)։

Մասնավոր ձեռնարկչի դեմ տարվող պայքարի հաջողության հիմքը կայանում է պետական արդյունաբերության և առեստի՝ մասնավոր ձեռնարկչի դեմ հաջող կոնկուրենցիա և մրցակցության վարելու մեջ։ Վորքան արագ և ուժեղ աճեն և զարգանան պետական արդյունաբերությունն ու առեստուրը (նաև կոռպերա-

ցիան), այնքան ավելի ուժեղ ու ամրակուռ
կլինի բանվոր գասակարգը և տնտեսապես թույլ՝
նրա հակառակորդը, մասնավոր ձեռնարկում:

ՊԱՐՏԱՎՈՐ Ե ԱՐԴՅՈՒՆ ՎԱՐՉՈՂԸ ԿՈԼԵԿՏԻՎ,
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՅԵԼ

Քիչ վերև մենք տեսանք, վոր աշխատանքի
որենքների ժողովածուն պարտավորեցնում ե
վարձվողի հետ աշխատանքային, այսինքն՝
անձնական վարձման պայմանագիր կնքել։ Սա-
կայն վարձողի համար կուլեկտիվ պայմանա-
գիր կնքելը պարտագիր չե։ Վարձողի համար
կոլեկտիվ պայմանագիր կնքելու պարտագիր
չինելը բղխում ե կոլեկտիվ պայմանագրի նշա-
նակությունից՝ բանվորական մասսաների դաս-
տիարակման, նրանց մեջ ակտիվություն և կնք-
նագործնեյություն արթնացնելու, միության
շուրջը նրանց համախմբելու և կազմակերպելու
գործում։

Ցեղե վարձողի համար կոլեկտիվ պայմա-
նագիր կնքելու պարտագրությունն որենքի ուժ
ստացած լիներ, պարզ ե, վոր մենք դրանով
իսկ զրկած կլինեյինք պայմանագիրն այն առա-
վելություններից, վոր նա ունի կողմերի կա-
մավոր համաձայնության դեպքում։ Գործնակա-
նում վարձողի համար կոլեկտիվ պայմանագրերի

պարտադիր լինելը կնշանակեր դարձ դեպի աշ-
խատավարձի և աշխատանքի պայմանների պետա-
կան նորմագործումը և՝ միաժամանակ՝ հրաժա-
րումն վերջիներիս պայմանագրական կարգով
կարգավորելուց, մի բան վոր նոր տնտեսական
քաղաքականության հանգամանքներում հակա-
սում ե միությունների հիմնական խնդիրներին։
Բացի այդ բացասական կողմերից, կոլեկտիվ
պայմանագրերի պարտագիր կնքումը խոչընդուռ
կարող եր հանդիսանալ պրոֆեսիոնալ կազմա-
կերպությունների ակտիվության և ինքնագոր-
ծնեյության գալգացման համար։

ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԻ ՊԱՅՄԱՆԱՆԵՐԻ ԿԱԽՈՒՄԻՒՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻՑ

Պետական արդյունաբերության մեջ կոլեկ-
տիվ պայմանագրը նրա տնտեսական կացության՝
ամբողջապես՝ և ընդհանուր տնտեսական համա-
կարգության մեջ տվյալ ձեռնարկության ար-
տահայտությունն ե հանդիսանում։ Ի՞նչ կերպ
ե տվյալ ձեռնարկության կամ տնտեսության
ճյուղի վիճակն արտացոլում տվյալ կոլեկտիվ
պայմանագրի մեջ։

Պետական արդյունաբերության զանազան
ճյուղերի զարգացումն համաշափորեն չի կատար
վում։ Արտադրած առարկաների քանակը, զբաղված

յիան), այնքան ավելի ուժեղ ու ամրակուռ կինի բանվոր դասակարգը և տնտեսապես թույլ՝ նրա հակառակորդը, մասնավոր ձեռնարկում:

ՊԱՐՏԱՎՈՐ Ե ԱՐԴՅՈՒՔ ՎԱՐՉՈՂԸ ԿՈԼԵԿՏԻՎ,
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆ ՑԵԼ

Քիչ վերև մենք տեսանք, վոր աշխատանքի որենքների ժողովածուն պարտավորեցնում և վարձվողի հետ աշխատանքային, այսինքն՝ անձնական վարձման պայմանագիր կնքել: Սակայն վարձողի համար կուլեկտիվ պայմանագիր կնքելը պարտադիր չե: Վարձողի համար կուլեկտիվ պայմանագիր կնքելու պարտադիր չինելը բղխում է կուլեկտիվ պայմանագրի նշանակությունից՝ բանվորական մասսաների դատիարակման, նրանց մեջ ակտիվություն և ինքնազործնեյություն արթնացնելու, միության շուրջը նրանց համախմբելու և կազմակերպելու գործում:

Յեթե վարձողի համար կուլեկտիվ պայմանագիր կնքելու պարտագրությունն որենքի ուժ ստացած լիներ, պարզ ե, վոր մենք դրանով իսկ զրկած կլինելինք պայմանագիրն այն առավելություններից, վոր նա ունի կողմերի կամավոր համաձայնության դեպքում: Գործնականում վարձողի համար կուլեկտիվ պայմանագրերի

պարտադիր լինելը կնշանակեր դարձ գեղի աշխատավարձի և աշխատանքի պայմանների պետական նորմավորումը և՝ միաժամանակ՝ հրաժարումն վերջիներիս պայմանագրական կարգով կարգավորելուց, մի բան վոր նոր տնտեսական քաղաքականության հանգամանքներում հակասում է միությունների հիմնական խնդիրներին: Բացի այդ բացասական կողմերից, կուլեկտիվ պայմանագրերի պարտադիր կնքումը խոչընդոտ կարող եր հանդիսանալ պրոֆեսիոնալ կազմակերպությունների ակտիվության և ինքնագործնեյության զարգացման համար:

ԿՈԼԵԿՏԻՎ, ՊԱՅՄԱՆԱԳԻՐԻ ՊԱՅՄԱՆԱՆԵՐԻ ԿԱԽՈՒՄԻՐՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՎԻՃԱԿԻՑ

Պետական արդյունաբերության մեջ կուլեկտիվ պայմանագրիը նրա տնտեսական կացության՝ ամբողջապես՝ և ընդհանուր տնտեսական համակարգության մեջ տվյալ ձեռնարկության արտահայտությունն է հանդիսանում: Ի՞նչ կերպ ե տվյալ ձեռնարկության կամ տնտեսության ճյուղի վիճակն արտացոլում տվյալ կուլեկտիվ պայմանագրի մեջ:

Պետական արդյունաբերության զանազան ճյուղերի զարգացումն համաշափորեն չի կատար կում: Արտադրած առարկաների քանակը, զբաղված

լինելու աստիճանը, հում նյութով ու պատվերներով ապահոված լինելու չափը, պատրաստված առարկաների վաճառման քանակն ու պայմանները և այլն, այս բոլորն արդյունաբերության առանձին ճյուղերում չափազանց տարբեր պատկեր ունեն: Արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղի համար հսկայական նշանակություն ունի պահանջն ու սպառման չափը. սրանք են վոր վորոշում են նրա արտադրած առարկաների վաճառման պայմանները:

Մյուս կողմից, ամեն մի ձեռնարկություն՝
ըստ գործի դրույքի՝ ունի վոչ միատեսակ վե-
րադիր և անարտադրողական ծախքեր ու արտա-
դրության հետ կապված զանազան ծախքեր։
Զեռնարկության կամ արդյունաբերության մի
ամբողջ ճյուղի աշխատանքի այս բոլոր պայման-
ները՝ միասին վերցրած՝ ստեղծում են նրան-
ցից յուրաքանչյուրի համար տարբեր աստիճանի
փրփառական հնարավորություններ ու անհա-
վասար նյութական բազա։ Աշխատավարձի տվյալ
չափն ու աշխատանքի այլ պայմանները, վորոնք
մի ձեռնարկության կամ արդյունաբերության
մի ճյուղի համար մատչելի յեն, մյուս ճյուղի
համար ծանր և անիրազործելի յեն հանդիսանում։
Հետեապես, տվյալ ձեռնարկության գրության
կամ համեմատ, կամ արդյունաբերության մի

ամբողջ ճյուղի ժողովրդական տնտեսության
ընդհանուր սիստեմում ունեած վիճակի համա-
պատասխան վորոշվում են աշխատանքի զանա-
գան պայմաններն ու աշխատավարձի չափն այդ
արդյունաբերության կամ ձեռնարկության մեջ
դրադիան բանվորների համար:

Պարզ ե վոր այս բոլորն անմիջականորեն
անդրագառնում ե կողեկտիվ պայմանագրի բո-
վանդակության վրա, վորովհետև պետական ար-
դյունքներության մեջ կողեկտիվ պայմանագրով
վոչ այլ ինչ ե, յեթե վոչ տվյալ ձեռնարկու-
թյան կամ արդյունաբերության տվյալ ճյուղի
զարգացման մեջ հավասարապես շահագրգության
կողմերի գործնական համաձայնություն:

ՊՐՈՎԻՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱ-
ՏԱՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անցնելով միությունների պայմանագրական
աշխատանքներին, մենք պետք ե խոստովանենք,
վոր այդ աշխատանքը մինչև որս անդամնելի
լայն մասսաների շահերը լիովին չի բավարարել:
Պրոֆմիությունների ընդհանուր տարիքային —
անտեսական աշխատանքի հիմնական պակասու-
թյունը, վոր իր հերթին կուլեկտիվ պայմանա-
գրեր կնքելու գործում մի շարք թերություններ
